ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակում №TG-2.2-28.11.19-101 ծածկագրով իրականացված «Շարժիչի, հիդրավլիկ և տրանսմիսիոն յուղերի ու քսայուղերի ձեռքբերման» բաց առաջարկների հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2020

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ:

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-իգնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Շարժիչի, հիդրավլիկ և տրանսմիսիոն յուղերի ու քսայուղերի» ձեռքբերման բաց առաջարկների հարցում

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ն 2019 թվականի գնումների պլանի հիման վրա և համաձայն 2019 թվականի նոյեմբերի 28-ի №TG-2.2-28.11.19-101 ծածկագրով բաց առաջարկների հարցման հանձնաժողովի որոշմամբ հաստատված հրավերի՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ին բաց առաջարկների հարցումով հայտարարել է «Շարժիչի, հիդրավլիկ և տրանսմիսիոն յուղերի ու քսայուղերի՝ 19 չափաբաժնով, ձեռքբերման» մրցույթ՝ մրցութային հայտերի ներկայացման ժամկետ սահմանելով մինչև 2019 թվականի դեկտեմբերի 5-ը: Ապրանքների մատակարարման ժամկետը և պայմանագրի առավելագույն արժեքը սահմանվել են ըստ բաց առաջարկների հարցման փաստաթղթերի:

Մրցույթի անցկացման նպատակով 2019 թվականի նոյեմբերի 28-ին Ընկերությունը մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը և հրավերը հրապարակել է «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում՝ www.procurement.am (Տեղեկագիր):

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 3 մասնակից՝ «Արման-Օիլ Մեկ» ՍՊԸ-ն, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն և «Մոսէքսո» ՍՊԸ-ն, որոնց կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

Հ/Հ	Ապրանքներիանվանումն ըստ չափաբաժինների	Մասնակից ընկերությունների ներկայացված գնային առաջարկները, մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ		
		«Արման-Օիլ Մեկ» ՍՊԸ	«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ	«Մոսէքսո» ՍՊԸ
	1	2	3	4
1	Շարժիչի յուղ SAE 10W40 կ/ս	1,99	2,17	1,83
2	Շարժիչի յուղ SAE 15W40 մին.	1,87	1,96	1,71
3	Շարժիչի յուղ SAE 20W50 մին.	1,24	1,30	1,13
4	Շարժիչի յուղ SAE 15W40 դիզել	2,99	3,19	2,74
5	Շարժիչի յուղ 15W40 91EE-62410	-	1,49	1,53

	HUNDAI			
6	Շարժիչի յուղ 15W40 JCB 3CX	-	0,13	0,13
7	Տրանսմիսիոն յուղ SAE80W90	-	0,95	0,97
8	Տրանսմիսիոն յուղ 85W140 Hundai	-	0,13	-
9	Տրանսմիսիոն յուղ 85W90 Hundai	-	0,11	-
10	Տրանսմիսիոն յուղ Նիգրոլ	-	-	0,17
11	Տրանսմիսիոն յուղ ՏԷՊ-15	-	-	0,21
12	Տրանսմիսիոն յուղ ԱՏՓ- (կարմիր)	-	0,044	0,06
13	Հիդրավլիկ յուղ Ի-40Ա	0,52	0,47	0,56
14	Հիդրավլիկ յուղ THK HLP-32	-	0,35	0,40
15	Հիդրավլիկ յուղ 91EE-61211 Hundai	-	0,74	0,74
16	Հիդրավլիկ յուղ AW46 JCB 3CX	-	0,10	0,10
17	Հիդրավլիկ յուղ MPM Oil HLP-46	-	0,098	0,08
18	Քսայուղ Լիտոլ-24	0,47	0,50	0,47
19	Քսայուղ 91EE-62510 Hundai	-	0,90	0,87
Ընդամենը		**9,08**	**14,63**	**13,7**

Մասնակիցների հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել են մրցութային պայմաններին բավարար:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ն 2019 թվականի դեկտեմբերի 12-ի նիստի №3 արձանագրությամբ որպես հաղթող, բավարար գնահատված բաց առաջարկների հարցման հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչել «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին՝ 5-9-րդ, 12-16-րդ չափաբաժինների մասով և «Մոսէսքո» ՍՊԸ-ին՝ 1-4-րդ, 10-11-րդ, 17-19-րդ չափաբաժինների մասով: Հաղթողներիի ընտրությունը կատարվել է հաղթողի ընտրության գնահատման աղյուսակի հիման վրա՝ յոթ չափանիշներով՝ սահմանված կարգին համապատասխան հայտի կազմում և ներկայացում, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերի առկայություն, տեխնիկական համապատասխանություն, ընդհանուր արժեք, մասնագիտական գործունեության համապատասխանություն, նախորդ 3 տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալ, ֆինանսական միջոցների առկայություն:

Ընկերության և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 24-ին կնքվել է պայմանագիր՝ 4,55 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, առավելագույն

արժեքով: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:

Ընկերության և «Մոսէսքո» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 24-ին կնքվել է պայմանագիր՝ 9,24 մլն դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, առավելագույն արժեքով: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակում №TG-2.2-28.11.19-101 ծածկագրով իրականացված «Շարժիչի, հիդրավլիկ և տրանսմիսիոն յուղերի ու քսայուղերի ձեռքբերման՝ 19 չափաբաժնով» բաց առաջարկների հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. Ընկերությունը Տեղեկագրում հայերեն և ռուսերեն լեզուներով հրապարակել է մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը, հրավերը: Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը ևս Տեղեկագրում հրապարակված է: Միևնույն ժամանակ, Ընկերությունը, չունենալով առանձին պաշտոնական կայք, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում իր համար նախատեսված առանձին՝ «Գնումներ», բաժնում չի հարապարակել մրցույթի կազմակերպման մասին հայտարարությունը, հրավերը, կնքված պայմանագրի մասին հայտարարությունը, ինչը Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումների համաձայն՝ պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինիս կողմից կազմակերպվող գնման ընթացակարգերի վերաբերյալ հայտարարությունների հրապարակման համար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում բաժին է նախատեսվել ս.թ. փետրվար ամսից սկսված:
2. Ընկերությունը գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկաների բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
3. Ընկերությունը մրցութային փաստաթղթերում ներկայացրել է նաև շուկայի ուսումնասիրության արդյունքներ:
4. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, գնային տեսանկյունից առավել ընդունելի առաջարկ ներկայացրած մասնակիցը:

5. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:
6. Պայմանագիրը կատարման ընթացքում է:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ

Գնման անվանումը «Շարժիչի, հիդրավլիկ և տրանսմիսիոն յուղերի ու քսայուղերի ձեռքբերում»

Գնման ծածկագիրը №TG-2.2-28.11.19-101

Գնման ձևը Բաց առաջարկների հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլէ տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունն իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակն ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☑	☐	☐	Ընկերությունը Տեղեկագրում մրցույթի անցկացման մասին հայտարարությունը և հրավերը հրապարակելուց բացի մասնակցության հրավեր է ուղարկել նաև 8 ընկերությունների՝ ներառյալ մրցույթում հաղթած մասնակիցներին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	
8	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	
9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐	
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը	☑	☐	☐	
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐	

12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
13	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
14	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	
15	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☑	☐	☐	
16	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
18	Գնմանպայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☐	☐	☑	Պայմանագիրը կատարման ընթացքում է:
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☑	☐	☐	